ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 419 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 4-Ի N 37-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 02528755) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2026 թվականի փետրվարի 4-ի «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Սոցիալ-հոգեբանական և տնտեսական աջակցություն» ծրագրի մասին» N 37-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Էյչ Այ ՈՒայ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 01564042) 2023 թվականի հոկտեմբերի 25-ին կնքված՝ N 450075 պայմանագրի շրջանակներում 2026 թվականի հուլիսի 10-ից մինչև 2026 թվականի հոկտեմբերի 25-ն ընկած ժամանակահատվածում հյուրանոցային ծառայությունների մատուցման գործարքը՝ 4,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Սոֆադ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 00019746) 2026 թվականի փետրվարի 25-ին կնքված՝ N 606584-2 պայմանագրի շրջանակներում 2026 թվականի հուլիսի 10-ից մինչև 2028 թվականի հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածում հիգիենայի պարագաների մատակարարման գործարքը՝ 1,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Օֆիս Պրո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 00861435) 2026 թվականի փետրվարի 25-ին կնքված՝ N 606530 պայմանագրի շրջանակներում 2026 թվականի հուլիսի 10-ից մինչև 2028 թվականի հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածում գրասենյակային և գրենական պարագաների մատակարարման գործարքը՝ 2,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Օֆիս Պրո» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 00861435) 2026 թվականի փետրվարի 25-ին կնքված՝ N 606584 պայմանագրի շրջանակներում 2026 թվականի հուլիսի 10-ից մինչև 2028 թվականի հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածում հիգիենայի պարագաների մատակարարման գործարքը՝ 2,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

13.07.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ